**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ**
**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄԱԾՁԲ-23-2**

**ք. Երևան** **31-ը մայիսի 2017թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս պաշտպանության նախարարության ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Պատվիրատու», մի կողմից «ՌԱԴԱՐ-ԱՎԻԱ» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Գ.Ղազարյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Կատարող», մյուս կողմից, երկուսը միասին՝ կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հինգօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցած Ծառայության յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 Հավելվածում: Պայմանագրի ընդհանուր գումարը կազմում է **51700250 (հիսունմեկ միլիոն յոթ հարյուր հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ** դրամ: Պայմանագրի գինը ներառում է տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ այն երկկողմ հաստատելու պահից՝ 10 բանկային օրվա ընթացքում՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում, սակայն ոչ ուշ քան 2017թ. դեկտեմբերի 10-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի

կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N2 և N3,3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ավիացիայի վարչությունը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | "Ռադար-Ավիա" ՓԲԸ |
| ք. Երևան, Բագրևանդի 5 | ք. Էջմիածին, Տեր Գաբրիելյան 22 |
| ՀՀ ֆինանսների նախարարության | «ԱԳԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ |
| աշխատակազմի գործառնական վարչություն | Հ/հ 220213330370100 |
| Հ/Հ 900011127108 | ՀՎՀՀ 04715288 |
| ՀՎՀՀ 00804008 | տնօրեն |
| ՀՀ պաշտպանության նախարարության | |
| ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ | |
| Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ | ... ԱՍԱՏՐՅԱՆ |

*Հավելված*
*N ՄԱԾՁԲ-23-2 ծածկագրու*
*գնման պայմանագրի*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| *N* | *Գնման առարկան* | Չափի միավոր | *Տեխնիկական պայմանները* |
|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* |
| 1. | Ինքնաթիռների պահպանման ծառայություններ (ՍԿՊ -11 կիսամյակային տեխնիկական) | հատ | Ավիացիոն հատուկ վերգետնյա կապի և ռադիոտեխնիկական միջոցների տեխնիկական նկարագրերին և վերանորոգման տեխնիկական փաստաթղթերին համապատասխան |
| 2. | Ինքնաթիռների պահպանման ծառայություններ (Ռ - 849 ռ/կ տարեկան տեխնիկական սպասարկում) | հատ | |
| 3. | Ինքնաթիռների պահպանման ծառայություններ (Ռ - 845 ռ/կ տարեկան տեխնիկական սպասարկում) | հատ | |
| 4. | Ինքնաթիռների պահպանման ծառայություններ (Ռ - 845 ստացիոնար ռ/կ տարեկան տեխնիկական սպասարկում) | հատ | |
| 5. | Ինքնաթիռների պահպանման ծառայություններ (ԱՌՊ -11 կիսամյակային տեխնիկական սպասարկում) | հատ | |
| 6. | Ինքնաթիռների պահպանման ծառայություններ (Ռ/Կ ՊԱՌ-10 "ԲՊՌՄ" եռամսյակային տեխնիկական սպասարկում) | հատ | |
| 7. | Ինքնաթիռների պահպանման ծառայություններ (Ռ/Կ ՊԱՌ-10 "ԴՊՌՄ" եռամսյակային տեխնիկական սպասարկում) | հատ | |
| 8. | Ինքնաթիռների պահպանման ծառայություններ (Ռ/Կ ԱՊՌ-7 կիսամյակային տեխնիկական սպասարկում) | հատ | |
| 9. | Ինքնաթիռների պահպանման ծառայություններ (ԱՌՊ -80 եռամսյակային տեխնիկական սպասարկում) | հատ | |
| 10. | Ինքնաթիռների պահպանման ծառայություններ (Տեղանիշ ՌՓ Ե-615 "ԲՊՌՄ", "ԴՊՌՄ" կիսամյակային տեխնիկական սպասարկում) | հատ | |
| 11. | Ինքնաթիռների պահպանման ծառայություններ (ՌՌ/Կ Ռ-415 կսամյակային տեխնիկան սպասարկում) | հատ | |
| 12. | Ինքնաթիռների պահպանման ծառայություններ (Ռ/Կ ՊԱՌ -10 "ՕՊՌՄ" կիսամյակային տեխնիկական սպասարկում) | հատ | |
| 13. | Ինքնաթիռների պահպանման ծառայություններ (Դիսպետչերական կառավարման վահանակ կիսամյակային տեխնիկական սպասարկում) | հատ | |
| 14. | Ինքնաթիռների պահպանման ծառայություններ (Ռ/կ Բակլան-20 տարեկան տեխնիկական սպասարկում) | հատ | |
| 15. | Ինքնաթիռների պահպանման ծառայություններ (Շարժական ռ/կ ՊԱՌ-10 ռադիոփարոսի տարեկան տեխնիկական սպասարկում) | հատ | |
| 16. | Ինքնաթիռների պահպանման ծառայություններ (Ռ/կ Բակլան-5 տարեկան տեխնիկական սպասարկում) | հատ | |
| 17. | Ինքնաթիռների պահպանման ծառայություններ (Ռ/կ Պոլյուս-1 տարեկան տեխնիկական սպասարկում) | հատ | |
| 18. | Ինքնաթիռների պահպանման ծառայություններ (Ռ/կ Պոլյուս 2 կիսամյակային տեխնիկական սպասարկում) | հատ | Ավիացիոն հատուկ վերգետնյա կապի և ռադիոտեխնիկական միջոցների տեխնիկական նկարագրերին և վերանորոգման տեխնիկական փաստաթղթերին |

| | | | |
|---|---|---|---|
| | | | համապատասխան |
| 19. | Ինքնաթիռների պահպանման ծառայություններ (Ռադիոընդունիչ Ռ-872 տարեկան տեխնիկական սպասարկում) | հատ | |
| 20. | Ինքնաթիռների պահպանման ծառայություններ (Ռադիոպելենգատոր ԱՊՌ-7 կիսամյակային սպասարկում) | հատ | |
| 21. | Ինքնաթիռների պահպանման ծառայություններ (ՊԱՌ-10 միջին վերանորոգում և կունգի մեջ տեղադրում) | հատ | Ավիացիոն հատուկ վերգետնյա կապի և ռադիոտեխնիկական միջոցների տեխնիկական նկարագրերին և վերանորոգման տեխնիկական փաստաթղթերին համապատասխան |

Ծանոթություն.

- ծառայությունները պետք է իրականացվեն ՀՀ ԶՈՒ ավիացիայի վարչության կողմից նշված փաստացի վայրում,
- ծառայությունները մատուցող կազմակերպությունը աշխատանքները պետք է իրականացնի իր տեխնիկական միջոցներով և անձնակազմով:
- շահագործման երաշխիքային ժամկետը միջին վերանորոգումից և կունգի մեջ տեղադրումից հետո 12 ամսից ոչ պակաս:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011127108
ՀՎՀՀ 00804008
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

**Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

**ԿԱՏԱՐՈՂ**

"Ռադար-Ավիա" ՓԲԸ
ք. Էջմիածին, Տեր Գաբրիելյան 22
«ԱԳԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/հ 220213330370100
ՀՎՀՀ 04715288
տնօրեն

Գ. ՂԱԶԱՐՅԱՆ

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| № | Անվանումը | Չափի միավոր | Քանակը | Ծառայությունների մատուցումն ըստ եռամսյակների | | | | Միավորի գինը/ՀՀ դրամ/ | Ընդհանուր գումարը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | I | II | III | IV | | |
| 1 | ՍԿՊ -11 կիսամյակային տեխնիկական սպասարկում | հատ | 6 | | 3 | | 3 | 644470 | 3866820 |
| 2 | Ռ – 849 ռ/կ տարեկան տեխնիկական սպասարկում | հատ | 3 | | 2 | 1 | | 786380 | 2359140 |
| 3 | Ռ – 845 ռ/կ տարեկան տեխնիկական սպասարկում | հատ | 3 | | 1 | 1 | 1 | 806650 | 2419950 |
| 4 | Ռ 845 (ստացիոնար) ռ/կ տարեկան տեխնիկական սպասարկում | հատ | 3 | | 1 | 1 | 1 | 806650 | 2419950 |
| 5 | ԱՌՊ 11 կիսամյակային տեխնիկական սպասարկում | հատ | 4 | | 2 | 2 | | 269950 | 1079800 |
| 6 | Ռ/Կ ՊԱՌ10 «ԲՊՌՄ» եռամսյակային տեխնիկական սպասարկում | հատ | 4 | | 2 | 1 | 1 | 639130 | 2556520 |
| 7 | Ռ/Կ ՊԱՌ10 «ԴՊՌՄ» եռամսյակային տեխնիկական սպասարկում | հատ | 8 | | 4 | 2 | 2 | 639130 | 5113040 |
| 8 | Ռ/Կ ԱՊՌ7 կիսամյակային տեխնիկական սպասարկում | հատ | 2 | | 1 | 1 | | 388000 | 776000 |
| 9 | ԱՌՊ 80 եռամսյակային տեխնիկական սպասարկում | հատ | 4 | | 2 | 1 | 1 | 645540 | 2582160 |
| 10 | Տեղանիշ ՌՓ E615 "ԲՊՌՄ", "ԴՊՌՄ" կիսամյակային տեխնիկական սպասարկում | հատ | 4 | | 2 | | 2 | 398000 | 1592000 |
| 11 | ՌՌ/Կ Ռ-415 կիսամյակային տեխնիկական սպասարկում | հատ | 8 | | 4 | 2 | 2 | 388000 | 3104000 |
| 12 | Ռ/Կ ՊԱՌ -10 "ՕՊՌՍ" կիսամյակային տեխնիկական սպասարկում | հատ | 10 | | 5 | 2 | 3 | 639130 | 6391300 |
| 13 | Դիսպետչերական կառավարման վահանակ կիսամյակային տեխնիկական | հատ | 4 | | 2 | 2 | | 644470 | 2577880 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | սպասարկում | | | | | | | | |
| 14 | Ռ/կ Բակլան-20 տարեկան տեխնիկական սպասարկում | հատ | 2 | | 1 | | 1 | 80020 | 160040 |
| 15 | Շարժական ռ/կ ՊԱՌ-10 ռադիոփարոսի տարեկան տեխնիկական սպասարկում | հատ | 3 | | 2 | | 1 | 639130 | 1917390 |
| 16 | Ռ/կ Բակլան-5 տարեկան տեխնիկական սպասարկում | հատ | 5 | | 3 | 1 | 1 | 80020 | 400100 |
| 17 | Ռ/կ Պոլյոտ-1 տարեկան տեխնիկական սպասարկում | հատ | 2 | | 1 | | 1 | 74690 | 149380 |
| 18 | Ռ/կ Պոլյոտ-2 կիսամյակային տեխնիկական սպասարկում | հատ | 6 | | 3 | 1 | 2 | 346780 | 2080680 |
| 19 | Ռադիոընդունիչ Ռ-872 տարեկան տեխնիկական սպասարկում | հատ | 5 | | 3 | 1 | 1 | 48020 | 240100 |
| 20 | Ռադիոպելենգատոր ԱՌՊ-7 կիսամյակային սպասարկում | հատ | 4 | | 2 | 2 | | 291000 | 1164000 |
| 21 | ՊԱՌ-10 միջին վերանորոգում և կունգի մեջ տեղադրում | հատ | 1 | | 1 | | | 8750000 | 8750000 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011127108
ՀՎՀՀ 00804008
ՀՀ պաշտպանության նախարարության ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

**Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

**ԿԱՏԱՐՈՂ**

“Ռադար-Ավիա” ՓԲԸ
ք. Էջմիածին, Տեր Գաբրիելյան 22
«ԱԳԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/հ 220213330370100
ՀՎՀՀ 04715288
տնօրեն

Գ. ՂԱԶԱՐՅԱՆ

*Հավելված*
*N ՄԱԾՁԲ-23-2 ծածկագրու*
*գնման պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| № | Ծառայության անվանումը | CPV դասակարգում | Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ. ըստ ամիսների,բայց ոչ ուշ քան 10.12.2017թ, ընդ որում՝ | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| | Ինքնաթիռների պահպանման ծառայություններ, այդ թվում | . | | | | | | | |
| 1 | ՍԿՊ -11 կիսամյակային տեխնիկական սպասարկում | 50211100/1/1/1 | 1933410 | 1933410 | 1933410 | 1933410 | 3866820 | 3866820 | 3866820 |
| 2 | Ռ – 849 ռ/կ տարեկան տեխնիկական սպասարկում | 50211100/2/1/1 | 1572760 | 2359140 | 2359140 | 2359140 | 2359140 | 2359140 | 2359140 |
| 3 | Ռ – 845 ռ/կ տարեկան տեխնիկական սպասարկում | 50211100/3/1/1 | 806650 | 1613300 | 1613300 | 1613300 | 2419950 | 2419950 | 2419950 |
| 4 | Ռ- 845 (ստացիոնար) ռ/կ տարեկան տեխնիկական սպասարկում | 50211100/4/1/1 | 806650 | 1613300 | 1613300 | 1613300 | 2419950 | 2419950 | 2419950 |
| 5 | ԱՌՊ 11 կիսամյակային տեխնիկական սպասարկում | 50211100/5/1/1 | 539900 | 1079800 | 1079800 | 1079800 | 1079800 | 1079800 | 1079800 |
| 6 | Ռ/Կ ՊԱՌ-10 «ԲՊՌՄ» եռամսյակային տեխնիկական սպասարկում | 50211100/6/1/1 | 1278260 | 1917390 | 1917390 | 1917390 | 2556520 | 2556520 | 2556520 |
| 7 | Ռ/Կ ՊԱՌ-10 «ԴՊՌՄ» եռամսյակային տեխնիկական սպասարկում | 50211100/7/1/1 | 2556520 | 3834780 | 3834780 | 3834780 | 5113040 | 5113040 | 5113040 |
| 8 | Ռ/Կ ԱՊՌ7 կիսամյակային տեխնիկական սպասարկում | 50211100/8/1/1 | 388000 | 776000 | 776000 | 776000 | 776000 | 776000 | 776000 |
| 9 | ԱՌՊ 80 եռամսյակային տեխնիկական սպասարկում | 50211100/9/1/1 | 1291080 | 1936620 | 1936620 | 1936620 | 2582160 | 2582160 | 2582160 |
| 10 | Տեղանիշ ՌՓ E615 "ԲՊՌՄ", "ԴՊՌՄ" կիսամյակային տեխնիկական սպասարկում | 50211100/10/1/1 | 796000 | 796000 | 796000 | 796000 | 1592000 | 1592000 | 1592000 |
| 11 | ՌՌ/Կ Ռ-415 կիսամյակային տեխնիկական սպասարկում | 50211100/11/1/1 | 1552000 | 2328000 | 2328000 | 2328000 | 3104000 | 3104000 | 3104000 |
| 12 | Ռ/Կ ՊԱՌ -10 "ՕՊՌՄ" կիսամյակային տեխնիկական սպասարկում | 50211100/12/1/1 | 3195650 | 4473910 | 4473910 | 4473910 | 6391300 | 6391300 | 6391300 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 13 | Դիսպետչերական կառավարման վահանակ կիսամսյակային տեխնիկական սպասարկում | 50211100/13/1/1 | 1288940 | 2577880 | 2577880 | 2577880 | 2577880 | 2577880 | 2577880 |
| 14 | Ռ/կ Բակլան-20 տարեկան տեխնիկական սպասարկում | 50211100/14/1/1 | 80020 | 80020 | 80020 | 80020 | 160040 | 160040 | 160040 |
| 15 | Շարժական ռ/կ ՊԱՌ-10 ռադիոփարոսի տարեկան տեխնիկական սպասարկում | 50211100/15/1/1 | 1278260 | 1278260 | 1278260 | 1278260 | 1917390 | 1917390 | 1917390 |
| 16 | Ռ/կ Բակլան-5 տարեկան տեխնիկական սպասարկում | 50211100/16/1/1 | 240060 | 320080 | 320080 | 320080 | 400100 | 400100 | 400100 |
| 17 | Ռ/կ Պոլյոտ 1 տարեկան տեխնիկական սպասարկում | 50211100/17/1/1 | 74690 | 74690 | 74690 | 74690 | 149380 | 149380 | 149380 |
| 18 | Ռ/կ Պոլյոտ-2 կիսամյակային տեխնիկական սպասարկում | 50211100/18/1/1 | 1040340 | 1387120 | 1387120 | 1387120 | 2080680 | 2080680 | 2080680 |
| 19 | Ռադիոընդունիչ Ռ-872 տարեկան տեխնիկական սպասարկում | 50211100/19/1/1 | 144060 | 192080 | 192080 | 192080 | 240100 | 240100 | 240100 |
| 20 | Ռադիոպելենգատոր ԱՌՊ-7 կիսամյակային սպասարկում | 50211100/20/1/1 | 582000 | 1164000 | 1164000 | 1164000 | 1164000 | 1164000 | 1164000 |
| 21 | ՊԱՌ-10 միջին վերանորոգում և կունգի մեջ տեղադրում | 50211100/21/1/1 | 8750000 | 8750000 | 8750000 | 8750000 | 8750000 | 8750000 | 8750000 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011127108
ՀՎՀՀ 00804008
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետ ՊժԿ

**Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

**ԿԱՏԱՐՈՂ**

"Ռադար-Ավիա" ՓԲԸ
ք. Էջմիածին, Տեր Գաբրիելյան 22
«ԱԳԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/հ 220213330370100
ՀՎՀՀ 04715288
տնօրեն

Գ. ՂԱԶԱՐՅԱՆ

*Հավելված 3*
*N ՄԱԾՁԲ-23-2 ծածկագրով*
*գնման պայմանագրի*

Պայմանագրի կողմ

______________________________

______________________________

գտնվելու վայրը ______________

հհ ______________________

______________________________

հվհհ ______________________

Պատվիրատու

______________________________

______________________________

գտնվելու վայրը ______________

հհ ______________________

______________________________

հվհհ ______________________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________________________________

______________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն՝ ի դեմս ____________________________________________ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս____________________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «____________ ____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին. Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

*Հավելված 3.1*
*N ՄԱԾՁԲ-23-2 ծածկագրով*
*գնման պայմանագրի*

# ԱԿՏ N

**պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ**

Սույնով արձանագրվում է, որ ----------------------------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
------------------------------------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ------ ------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| **Անվանումը** | **Քանակական ցուցանիշը (փաստացի)** | **Չափի միավորը** |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

____________________
ազգանուն, անուն

____________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

____________________
ազգանուն, անուն

____________________
ստորագրություն